ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 հոկտեմբերի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

137
(2803)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀՌՈՄԻ ՍՏԱՏՈՒՏՆ ՈՒ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Այսօր մեկնարկելու է ԱԺ ութերորդ գումարման վեցերորդ նստաշրջանի առաջին նիստը: Նիստի օրակարգում ներառված է 18 հարց: Վերջերս ամենաշատ քննարկված Հռոմի ստատուտի հարցը օրակարգում 14-րդն է: Ամենայն հավանականությամբ, այս հարցը հենց նիստերի առաջին օրն էլ կքննարկվի, սակայն կընդունվի, թե ոչ, պարզ կդառնա քվեարկությունից հետո: ՔՊ-ի այս քայլը արվում է նրա համար, որ հակառուսական տրամադրությունները քաղաքացիների շրջանում ավելի ամրապնդվեն: Նիկոլ Փաշինյանը ամեն հնարավոր եղանակով ասում է. «Այդ գործընթացը ամենեւին էլ կապված չէ ՀՀ-ՌԴ հարաբերությունների հետ, կապված է սահմանային լարվածությունների հետ»: Թեեւ, ըստ Փաշինյանի, այն կապված չէ ՀՀ-ՌԴ հարաբերությունների հետ, սակայն ռուսական կողմը շատ կոշտ է արձագանքել՝ այն համարելով «տոքսիկ որոշում»: Հիշեցնենք, որ ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Պեսկովը հայտարարել էր, որ այս նախագծի ընդունումը ամենաբացասական հետեւանքները կունենա երկկողմ հարաբերությունների վրա: Մինչ այդ Միջազգային իրավական հարցերով Հայաստանի ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը հայտարարեց, որ սա ենթադրում է երկկողմ համաձայնագրի ստորագրում, որը հնարավորություն է տալիս որոշակի երաշխիքներ ստեղծել այն անհանգստությունների համար, որոնք որոշ գործընկեր պետություններ կարող են ունենալ: Տեքստը ներկայացվել է ամիսներ առաջ, սպասում են գործընկերների առաջարկին: Իշխանությունները, այս քայլին գնալով, չեն մտածում, որ Հայաստանը առերեւույթ մեծ կախվածության մեջ է Ռուսաստանից, այսինքն՝ յուրաքանչյուր ոլորտում կա ռուսական դրոշմ՝ գազ, էլեկտրաէներգիա, ռուսական ընկերություններ, որոնցից գոյանում է նաեւ ՀՀ բյուջեի որոշակի մասը: Կա նաեւ հայկական սփյուռք ՌԴ-ում: Ռուսական կողմի սպառնալիքները, թե ամեն բան վատ կլինի, եթե ընդունվի Հռոմի ստատուտի մասին նախագիծը, կարող է գործել, եւ մի քանի օրվա ընթացքում ռուսական կողմը Հայաստանին կարող է զրկել եւ՛ գազամատակարարումից, եւ՛ էլեկտրաէներգիայից: Այսինքն՝ իշխանությունները կրկին չեն գիտակցում, թե ինչ է կատարվելու եւս մեկ սխալ որոշումից հետո, կրկին մտադրված քայլեր են անում Հայաստանի վաղեմի բարեկամներին վանելու հարցում եւ փորձում են բարեկամություն հաստատել երկրի հետ, որի հետ կապերը խզել ենք. վառ օրինակ են հարաբերությունները եւ դիվանագիտական կապերը, որոնք ստեղծվում են Հունգարիայի հետ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ չնայած ավագանու ընտրություններում կրած պարտությունից հետո իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ներսում ծանր ու տխուր իրավիճակ էր ստեղծվել, իշխանականները տեւական ժամանակ խորը հիասթափության մեջ էին, բայց ինչպես իշխանական մեր աղբյուրներն են փոխանցում, ՔՊ-ականների «սրտից մի մեծ քար է ընկել», քանի որ կարողացել են իրենց հարցերը կարգավորել: Այսպիսով, ինչպես հայտնի է, հոկտեմբերի 10-ին Երեւանի նորընտիր ավագանու առաջին նիստը պետք է տեղի ունենա, որի ժամանակ էլ քաղաքապետ պետք է ընտրվի, որը, մեծ հավանականությամբ, կլինի հենց Ավինյանը: Ավագանու նիստը տեղի կունենա այն դեպքում, եթե նիստին ներկա լինի ավագանու 33 անդամ: «Քաղաքացիական պայմանագիր» եւ «Հանրապետություն» կուսակցությունները միասին ունեն 32 մանդատ. այսպիսով, եթե մյուս երեք ուժերից անգամ մեկ ներկայացուցիչ ներկա լինի նիստին, ապա նիստը կկայանա: Նախկին քաղաքապետ Հայկ Մարությանի գլխավորած «Ազգային առաջընթաց» կուսակցությունը եւ ԱԺ նախկին պատգամավոր Անդրանիկ Թեւանյանի «Մայր Հայաստան» դաշինքը հայտարարել են, որ այդ օրը չեն մասնակցելու նիստին, որպեսզի քվորում չապահովեն, նիստը չկայանա, եւ նոր ընտրությունների գնան. այժմ որոշում կայացնողը «Հանրային ձայն»-ն է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մի քանի օր բանակցելուց հետո ՔՊ-ին հաջողվել է համաձայնության գալ «Հանրային ձայն» կուսակցության հետ եւ նրանցից մեկ ձայն «կորզել»: Այսպիսով, հոկտեմբերի 10-ին կայանալիք ավագանու նիստին, բացի իշխանությունից եւ մերձիշխանական դիրքերից հանդես եկող «Հանրապետություն» կուսակցությունից, ներկա կլինի «Հանրային ձայն»-ից մեկ ներկայացուցիչ, որպեսզի այդ օրը նիստին քվորում ապահովեն: Եթե նիստը կայանում է, եւ որպես քաղաքապետ առաջադրվում է միայն 1 թեկնածու, ապա այս դեպքում անհրաժեշտ կլինի, որ նրա օգտին քվեարկի ավագանու 40 տոկոսից ավելին: Ավագանու նորընտիր ցանկը հաստատված է, այն ունի 65 անդամ: Այսպիսով, եթե առաջադրվի միայն 1 թեկնածու, ապա 27 կողմ ձայնն անգամ բավարար կլինի քաղաքապետ ընտրելու համար: Ստացվում է՝ եթե «Հանրային ձայն»-ից մեկ հոգի էլ այդ օրը ներկա լինի ավագանու նիստին, եւ նիստը կայանա, ապա ՔՊ-ն եւ «Հանրապետություն»-ը, առանց որեւէ խնդրի, կարող են ընտրել Տիգրան Ավինյանին: «Հանրային ձայն» կուսակցությունը թեեւ վերջնական որոշման մասին չի հայտարարել, բայց կուսակցության առաջնորդ Վարդան Ղուկասյանը երեկ հայտարարություն տարածեց, թե Երեւանի ավագանու ընտրությունների երկրորդ փուլ թույլ տալ չի կարելի այս իրավիճակում, ավելին՝ հայտարարեց, որ նախընտրում է ավելի, որ Մարությանի եւ Թեւանյանի ուժերը չամրապնդվեն, քան թե Ավինյանը չվերարտադրվի: Նրա այս հայտարարությունը, թերեւս, հաստատում է մեր տեղեկությունները:

ՀՀ իշխանությունները անասելի վախեցած են Արցախի հանձնման գործընթացից հետո սպասվող զարգացումներից: Դրան պատրաստվելու համար նախ տարածում են կեղծ նարատիվներ, թե արցախցիներին, որոնք դուրս կգան փողոց, պետք է զրկել օգնություն ստանալու հնարավորությունից: Ապա նաեւ անձնական ինքնապաշտպանությամբ են զբաղված: «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողը ֆիքսեց, որ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը շրջում է ծառայողական ավտոմեքենայով, որի վրա ոչ թե կառավարական համարանիշներ են, այլ օպերատիվ: Նա օպերատիվ համարանիշներով քողարկում է իր ով լինելը, որպեսզի Արարատ Միրզոյանի ծեծի դառը օրինակն իրեն չսպառնա: Իսկ որ իշխանությունները սպասում են այդպիսի ցասման, միանշանակ է:

2022 թվականի դեկտեմբերի 1-ին հայտարարություն եղավ այն մասին, որ Հայաստանն ու Հունգարիան վերսկսում են դիվանագիտական հարաբերությունները: Հայաստանի եւ Հունգարիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունները, Հայաստանի ազգային անվտանգության խորհրդի որոշմամբ, կասեցվել են 2012 թվականից՝ 2004-ին Հունգարիայում հայ լեյտենանտ Գուրգեն Մարգարյանի սպանության համար դատապարտված Ռամիլ Սաֆարովի՝ Ադրբեջան արտահանձնումից հետո: Եվ, ահա, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ որ այս հայտարարությունից գրեթե մեկ տարի անց այս մասով նաեւ ՀՀ ԱԺ-ում է գործընթաց սկսվել: Մասնավորապես, ԱԺ-ում ստեղծվում է Հայաստան-Հունգարիա բարեկամական խումբ: Այս խմբի անդամները հաստատվել են, սակայն կազմված են միայն իշխանական պատգամավորներից: Խմբի ղեկավարը Հռիփսիմե Գրիգորյանն է, անդամներն են Արսեն Թորոսյանը, Գայանե Եղիազարյանը, Միքայել Թումասյանը, Մարիա Կարապետյանը: Ընդդիմությունը ներկայացված չէ Հայաստան-Հունգարիա բարեկամական խմբում:

ԶՐՈՒՅՑ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ Ն. ՓԱՇԻՆՅԱՆՆ Է ՍՏՈՐԱԳՐԵԼ»

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ՀՀ ԳՇ նախկին պետ Մովսես Հակոբյանի հետ:

-Պարոն Հակոբյան, տարիների պայքարից հետո Արցախն ընկավ, հունվարի 1-ից փաստացի Արցախի Հանրապետությունը լուծարվելու է: Ինչո՞ւ այս իրավիճակին հասանք, որտե՞ղ սխալվեցինք:

-Մենք այս իրավիճակին հասել ենք 2018թ.-ին

-Այսինքն՝ ըստ Ձեզ՝ եթե հեղափոխություն չլիներ, ապա հնարավոր կլինե՞ր խուսափել Արցախի կորստից:

-Իմ կարծիքով՝ այո: Իշխանափոխություն չպետք է անեին: Հազար մանրուք կա. եթե ղեկավարը երկիրը տանում է կործանման, հասնում ենք կործանման: Իսկ թե ինչ սխալներ արեցին, ով սխալ արեց, չեմ կարող հիմա ամբողջը վերլուծել. բազմաթիվ անգամներ անդրադարձել եմ՝ սխալները որոնք էին:

-Պարոն Հակոբյան, բայց գործող իշխանություններն էլ հակառակն են պնդում, ասում են, որ այս իրավիճակը 30 տարվա բանակցությունների արդյունք է, իրենք վատ ժառանգություն էին ստացել, ու այլևս հնարավոր չէր այս իրավիճակից խուսափել:

-Թող իշխանություն չվերցներ:

-Ժողովուրդն էր 2018թ.-ին պահանջում իշխանափոխություն, փողոցներ էին փակում, անհնազանդության ակցիաներ էին անում:

-Թող իրենք էլ հրաժարվեին, եթե տեսնում էին, որ վատ ժառանգություն են ստացել, թող հրաժարվեին, ասեին՝ ժողովո՛ւրդ ջան, չենք կարող ձեր ցանկությունները կյանքի կոչել: Հազար մարդ կա, որ պաշտոն են առաջարկում, հրաժարվում է:

-Պարոն Հակոբյան, իսկ վերջին շրջանում Արցախում տեղի ունեցող իրադարձությունները, մասնավորապես՝ իշխանափոխությունը, ի՞նչ դեր խաղաց այստեղ: Հայաստանի իշխանությունները պնդում են՝ դա է առիթ հանդիսացել, որ իրավիճակը լարվի:

-Դա որեւէ նշանակություն չունի: Արցախի հանձնումը Նիկոլ Փաշինյանն է ստորագրել. ես հազար անգամ անդրադարձել եմ սրան, անգամ այնպիսի խոսքեր եմ ասել, որ մարդիկ հասկանան, ասել եմ, որ եթե Նիկոլ Փաշինյանի կինը հասկանար, թե իր ամուսինն ինչ փաստաթուղթ է ստորագրել, նրան չէր թողնի՝ տուն մտնի: Նոյեմբերի 9-ի փաստաթղթի մեջ ամեն բան գրված է. այս գործընթացը, որ հիմա գնում է, դրա հետեւանքն է, բայց դեռեւս չի ավարտվել: Նոյեմբերի 9-ի փաստաթղթի բոլոր կետերը կատարվել են՝բացառությամբ 2 կետի:

-Պարոն Հակոբյան, հաշվի առնելով, որ Թուրքիան եւ Ադրբեջանը հաճախ են խոսում, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքի» մասին, հնարավո՞ր է Սյունիքում սահմանային լարումներ լինեն առաջիկայում:

-Նոյեմբերի 9-ի փաստաթղթի մեջ սեւը սպիտակի վրա գրված է, ցանկացած մարդ, որը զբաղվում է ղեկավարմամբ, քաղաքականությամբ, պետք է կարողանա կարդալ, հասկանալ դա: Փաստաթղթում գրված է ամեն բան. ով քիչ թե շատ հասկանում է քաղաքականությունից, պետք է կարդա դա ու հասկանա այդ կետերի հետեւանքները:

-Արցախի մի շարք պաշտոնյաներ եւ ՊԲ հրամանատարներ գերեվարվել են, Ադրբեջանը ձերբակալել է նրանց ու շինծու մեղադրանքներ առաջադրել. այս մասին ի՞նչ կասեք:

-Սպասելի էր դա, անսպասելի ոչինչ չկա:

-Պարոն Հակոբյան, իսկ նախադրյալներ տեսնո՞ւմ եք, որ ապագայում բանակցությունների միջոցով կարողանանք հետ բերել Արցախը:

-Ես երազանքներով չեմ ապրում: Ուզում է աշխարհը շուռ գա, այն, ինչ կորցնում ես, կորցնում ես, վե՛րջ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՆՊԱՏԱՍԽԱՆ

ՔՊ–Ն ԱՆԱՐԳՈՒՄ Է ՕՐԵՆՔԸ

ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածների եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տեղեկատվություն ստանալու իրավունք: Մասնավորապես, հարցման հասցեատերը պետք է կա՛մ 5-օրյա ժամկետում պատասխանի հարցերին, կա՛մ նշի մերժման պատճառները, կա՛մ պահանջի 30-օրյա ժամկետ՝ հավելյալ ուսումնասիրման համար: Այս հոդվածների մասին տեղյակ չլինելը ամոթ չէ, բայց օրենսգրքի էջերը չթերթելը գոնե հավելյալ հուշումներից հետո էլ, մեղմ ասած, անհասկանալի է, հատկապես՝ այն դեպքում, երբ դու իշխող ուժ ես կամ ուժի ներկայացուցիչ:

Եվ այսպես, «Ժողովուրդ» օրաթերթը օգոստոսի 3-ին տեղեկատվություն ստանալու մասին հարցում էր ուղարկել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գրասենյակ՝ խնդրելով տեղեկություններ տրամադրել այն մասին, թե հուլիսի 31-ին «Դվին» ռեստորանային համալիրում տեղի ունեցած ՔՊ կուսակցության դրամահավաքի նվիրատուներն ովքեր են: 5-օրյա ժամկետն անցավ՝ լռություն: Ենթադրելիք 30 օրյա ժամկետն անցավ՝լռություն: Սեպտեմբերի 13-ին «Ժողովուրդ» օրաթերթը հիշեցնում է կուսակցությանը. «Հարգելի՛ գործընկերներ, նամակ ունեք, վերանայե՛ք»: Կրկին լռություն:

Դեպքի առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ՝ հասկանալու համար, թե ինչ հնարավոր ելքեր կան նման պարագայում: Փաստացի արհամարհվում է օրենքն իշխող ուժի կողմից: Պարզվում է՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ոչ թե որեւէ իքս լրատվամիջոցի չի պատասխանում, այլ բոլորին: ԻԱԿ-ը եւս 2023 թվականի օգոստոսի 23-ին հարցում է ուղարկել «Քաղաքացիական պայամանագիր» կուսակցությանը նույն թեմայով՝ նույն մեռյալ լռությանն արժանանալով. փորձը կրկնել է սեպտեմբերի 11-ին: Լռության հերթական ալիքից հետո հիշեցրել են սոցցանցերով:

Նշենք, որ օրենքի որեւէ կետով սահմանված չէ, որ պետք է հարցումն ուղարկելուց հետո անընդհատ նաեւ հիշեցումներ անել սոցիալական տարբեր էջերով: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ իշխող քաղաքական կուսակցությունը կա՛մ խուսափում է նվիրատուների ու իրենց հավաքի մասին հարցերից, կա՛մ արհամարհում է օրենքը:

«Ժողովուրդ» օրաթերթի կողմից հիշեցում.

ՀՀ Սահմանադրություն

Հոդված 51

1.Յուրաքանչյուր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու եւ փաստաթղթերին ծանոթանալու իրավունք:

...

2. Տեղեկություններ ստանալու կարգը, ինչպես նաեւ տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումն անհիմն մերժելու համար պաշտոնատար անձանց պատասխանատվության հիմքերը սահմանվում են օրենքով:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք

6-րդ հոդված

1.Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:

11-րդ հոդված

1. «Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը»:

ԱՂԱԶԱՐՅԱՆԸ ԿԱՌԵՐԵՍՎԻ ԶԻՆՎՈՐԻ ՀՈՐ ՀԵՏ

ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանը եւ 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողի հայրը կառերեսվեն: Բանն այն է, որ պատգամավորի ու զինվորի հոր ցուցմունքներում հակասություն կա, ուստի իրավապահները Հովիկ Աղազարյանին կկանչեն կոմիտե՝ առերեսման:

Ինչպես հայտնի է, սեպտեմբերի 21-ին ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանին հայհոյած՝ 44-օրյա պատերազմի հերոս Լեւոն Գալստյանի հորը՝ Արմեն Գալստյանին, կալանավորել են:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանին Քննչական կոմիտե են կանչել ու հարցաքննել, որտեղ նա ցուցմունք է տվել ու ասել, որ իրեն հայհոյել են, իսկ ինքը որեւէ հայհոյանք չի տվել: Քննիչը, լսելով ՔՊ-ական պատգամավորին, ավելի ուշ այլ բան է պարզել. նրան պաշտպանական կողմը ներկայացրել է տեսանյութ, որով հիմնավորվել է, որ պատգամավորը կեղծ ցուցմունք է տվել:

Իրականում Աղազարյանը եւս հայհոյել է զոհվածի ծնողին եւ առանց ամաչելու ստել է քննիչին՝ փաստացի կեղծ ցուցմունք տալով: Նշենք, որ Հովիկ Աղազարյանը առաջին անգամ չէ նման պատմության մեջ հայտնվում: Նա ամիսներ առաջ Արաբկիր վարչական շրջանում քաղաքացու կարտոֆիլն էր ոտքով հրել ու թափել, սակայն իրավապահները նրան խուլիգանության համար պատասխանատվության չկանչեցին: Արցախցի Տաթեւ Վիրաբյանին էր անձնական նամակով հայհոյել ու կրկին անպատիժ մնացել:

Այնինչ, երբ ՔՊ-ականի հայհոյեցին, ապտակեցին, իրավապահները անմիջապես զինվորի հորը կալանավորեցին. սա ընտրովի արդարադատության հերթական դրսեւորումն է:

Ընդգծենք, որ սուտ ցուցմունք տալը քրեորեն պատժելի է:

ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բանակցությունների եւ ձեռք բերված պայմանավորվածությունների արդյունքում ԱՀ երեք նախագահները՝Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը եւ Արայիկ Հարությունյանը, ինչպես նաեւ Արցախում մնացած կառավարության մեծ մասը, ուժայինների ղեկավարությունը հոկտեմբերի 1-ի երեկոյան վերադարձել են Հայաստան:

Հիշեցնենք, որ Հակարիի կամուրջը հատելիս ադրբեջանցի սահմանապահները գերեվարել էին Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանին, ՊԲ նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանին եւ ՊԲ հրամանատարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանին, նրանց հետագայում կալանավորել են ու շինծու քրգործեր հարուցել նրանց դեմ:

Ադրբեջանի «սեւ ցուցակում» ներառված Դավիթ Բաբայանը որոշել էր Ստեփանակերտից մեկնել Շուշի: Նրան Ադրբեջանում կալանավորել են եւ կեղծ մեղադրանք առաջադրել Ադրբեջանի քրեական օրենսգրքի ավելի քան 25 հոդվածներով:

Չորս ձերբակալվածների ազատ արձակման շուրջ բանակցություններ են ընթանում:

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԱԼԻԵՎԻ

Ինչպես հաղորդում են ադրբեջանական լրատվամիջոցները, 74-րդ միջազգային տիեզերագնացության կոնգրեսի բացման արարողություն ժամանակ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը խոսել է տարածաշրջանում կատարված իրադարձությունների մասին:

Նա պնդել է, թե իրենք վերջ են դրել հակամարտությանը եւ այդ հակամարտության լուծման ճանապարհին պահպանել են իրենց արժանապատվությունը՝ միաժամանակ վերականգնելով միջազգային իրավունքը:

«Այսօր մենք կարող ենք թեւակոխել Հարավային Կովկասում խաղաղության դարաշրջան: Սա մեր կարծիքն է: Համագործակցություն, փոխշահավետ նախագծեր. մենք այսօր ցույց ենք տալիս այս ամենը»,- ընդգծել է պետության ղեկավարը:

Հավելենք, որ Ադրբեջանի Հանրապետությունը «Խաղաղության դարաշրջան» թեւակոխեց՝ սպանելով անմեղ բնակիչների, որոնց թվում կային նաեւ երեխաներ, ծերեր: Եվ այդ ամենը նրանք անում են բացահայտ՝ ժամանակ առ ժամանակ իրենց կայքէջերում հրապարակելով դաժան կադրեր, օրինակ՝ թե ինչպես են քանդում, ավերում բնակիչների տները, մշակութային կոթողները, որոնք դարերի պատմություն ունեն, ծաղրում կամ տանջում տարեցներին եւ նման շատ այլ դեպքեր, իսկ միջազգային կառույցները դեռ պետք է ամեն բան իրենց աչքով տեսնեն, նոր համոզվեն:

ԹՈՒՐՔԻԱՆ ՉԻ ԸՆԴՈՒՆԻ

Ինչպես հայտնում են թուրքական լրատվամիջոցները, Եվրամիությանն անդամակցելու նոր պահանջներն ու պայմանները Թուրքիան չի ընդունի:

Այս մասին հայտարարել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը՝ հավելելով, որ Թուրքիան կատարել է Եվրամիությանը տված բոլոր խոստումները, սակայն դաշինքը չի կատարել իր խոստումներից գրեթե ոչ մեկը:

«Չնայած վարչակազմերի փոփոխությանը՝ Եվրամիության անարդար եւ կողմնակալ վերաբերմունքը մեր երկրի նկատմամբ, որը անհամատեղելի է հավատարմության սկզբունքի հետ, չի փոխվել: Ինչպես Թուրքիան, այնպես էլ մենք ակնկալիքներ չունենք Եվրամիությունից, որտեղ մենք ստիպված են եղել 60 տարի սպասել»,- ասաց նա:

ԲԱՐՁՐԱՁԱՅՆՈՒՄ Է

ԹԱԳՈՒՀԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԸ՝ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Միջազգային իմ բոլոր գործընկերների հետ հանդիպումների, տարբեր ձեւաչափով ամենօրյա քննարկումների ժամանակ շարունակ ներկայացնում եմ արցախահայության շուրջ ստեղծված աղետալի իրավիճակը՝ բարձրաձայնելով այնպիսի խնդիրների հրատապ կարգավորումը, ինչպիսիք են ներքոթվարկյալները.

1. հնարավոր բոլոր օղակներով պետք է օր առաջ արցախահայության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվելու հարցերը հիմնական լուծում ստանան:

2. Արցախցին Հայաստանում պետք է ապրի իր սեփական տանը եւ հայրենիքում նոր կյանքի ադապտացվի: Արցախահայության վերաբնակեցման համար Հայաստանին տրված օգնության գումարներով պետք է մարդկանց համար տներ գնվեն: Չպիտի՛ թույլ տանք նրանց արտագաղթը:

3. Արցախահայերի առողջության, կրթության, աշխատանքի պահպանման (գտնելու) եւ շարունակականության համար պետք են հստակ եւ տեսանելի ջանքեր գործադրվեն:

4. Միջազգային մանդատով դիտորդները պետք է Արցախում տեղակայվեն, որքան հնարավոր է, շուտ: Այդկերպ կփորձենք իրացնել արցախահայության սեփականության իրավունքի պահպանումը եւ չեզոքացնել քաղաքացիներին ու պետությանը պատկանող գույքի ավերման հավանականությունը: Նաեւ պետք է ստեղծվեն երաշխիքներ, որ մարդիկ կարողանան իրենց սեփական գույքը անվնաս դուրս բերել կամ տնօրինել, ինչպես կկամենան:

5. Հայկական մշակութային եւ կրոնական ժառանգության պահպանումը հրամայական է: Ինչպես Արցախում այս պահին գտնվող ռուս խաղաղապահները, այնպես էլ միջազգային դիտորդները պետք է արգելեն Շուշիի սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու եւ հայկական մյուս կրոնական կոթողների պղծման ու ոչնչացման հանցավոր սցենարի կրկնումը:

6. Հայերի գերեզմանները պետք է անձեռնմխելի լինեն եւ հեռու ադրբեջանական վայրագություններից:

7. Եթե Արցախում դեռ կան Պաշտպանության բանակի զինվորականներ, նախկին եւ ներկա պաշտոնյաներ (իրենց ընտանիքների հետ), առանց թիրախավորման, անխոչընդոտ ու անվտանգ պետք է կամ ապրեն Արցախում, եթե ուզում են, կամ դուրս գան առանց հետապնդման: ՀՀ-ում կամ այլուր նրանք պետք է ապրեն առանց արհեստական խոչընդոտների եւ մտացածին քրեական հետապնդումների:

Ռուբեն Վարդանյանի, Լեւոն Մնացականյանի, Դավիթ Մանուկյանի, Դավիթ Բաբայանի ու մյուս գերեվարված մեր հայրենակիցների ազատությունը բոլորիս խնդիրն է, ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԸ:

8. Աշխարհի բոլոր դերակատարները պետք է փաստարկված տվյալներ ունենան իրենց ձեռքի տակ, որպեսզի հայտարարեն, որ ադրբեջանական, այսպես կոչված, «հակաահաբեկչական գործողությունները», որոնք սկսվեցին սեպտեմբերի 19-ից եւ ընթացան 9 ամիս շրջափակված Արցախի խաղաղ բնակչության էթնիկ զտմամբ եւ ցեղասպանությամբ, վկայում են ոչ միայն ադրբեջանի կեղծ հումանիզմի, նրանց հետ խաղաղ համագոյակցության անհնարինության, այլեւ այն մասին, որ միջազգային դերակատարների դատապարտող հայտարարությունները ոչինչ չարժեն:

9. Պետք է բոլորս ջանքեր գործադրենք, որպեսզի դատապարտող հայտարարությունները փոխարինվեն հստակ գործողություններով՝ աջակցելու Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչմանը, որի մասին բազմիցս բարձրաձայնել եմ միջազգային ամբիոններից, ինչպես նաեւ Ադրբեջանի նկատմամբ կոնկրետ պատժամիջոցներ կիրառվեն՝ որպես ցեղասպան, ագրեսոր երկրի:

Աշխարհի բոլոր կետերում պետք է լսելի դարձնենք մեր ձայնը, որ Արցախի ցեղասպանությունը անպատիժ իրականացրած Ադրբեջանը նույն սցենարը ձգտում է կրկնել անկախ, ինքնիշխան Հայաստանի նկատմամբ: ՀՀ-ից արդեն 3 տարի օկուպացրած տարածքներն Ադրբեջանը չի վերադարձնում ու էլի անպատիժ է....

Նիկոլ Փաշինյանի անկարող ու ապիկար իշխանության վրա հույս չեմ դնում. բոլորս մեր տեղում պիտի այս կետերի շուրջ աշխատենք՝ հանուն մեր ժողովրդի եւ հայրենիքի, որը ծանր վիրավոր է»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԿՈՒԹՈՒՄ

«Գեղարքունիքի մարզի Կութ գյուղում կրակոցներ չկան, հանգիստ է»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց Կութի գյուղապետ Գրիգորի Ավագյանը:

ՀՀ ՊՆ-ն երեկ հայտարարություն տարածեց, որ հոկտեմբերի 2-ին՝ ժամը 14:25-ի սահմաններում, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները հրաձգային զենքերից կրակ են բացել Կութի հատվածում տեղակայված հայկական դիրքերի անձնակազմի համար սնունդ տեղափոխող մեքենայի ուղղությամբ:

Մեզ հետ զրույցում գյուղապետ Գրիգորի Ավագյանն ասաց, որ այս պահին գյուղում չէ, բայց զրուցել է բնակիչների հետ, իրեն փոխանցել են, որ այս պահին կրակոցներ չկան: «Զանգել եմ գյուղ, ասացին, որ ամեն ինչ նորմալ է, հանգիստ է, նույնիսկ գյուղատնտեսական աշխատանքներով էին զբաղված մարդիկ: Կրակոցներ մեզ մոտ միշտ էլ լինում են. այնպես չէ, որ առաջին անգամն է»,-ասաց նա:

Ինչ վերաբերում է սնունդ տեղափոխող մեքենային, գյուղապետն ասաց, որ այն ՊՆ-ի ենթակայության տակ գտնվող մեքենա է:

ՁԵՆՔ ԿՏՐԱՄԱԴՐԻ՞

«ԱՄՆ-ն պետք է Հայաստանին զենք տրամադրի»,- իր X միկրոբլոգում գրել է ամերիկացի կոնգրեսական Բրեդ Շերմանը:

«Հիմա մենք պետք է զինենք Հայաստանը համապատասխան պաշտպանական զենքով՝ ներխուժումը կանխելու համար: Անիմաստ է ասել, որ Ուկրաինան չպետք է տարածք կորցնի զինված ագրեսիայի արդյունքում, իսկ Հայաստանի տարածքային ամբողջականությունը ԱՄՆ ազգային շահերի մեջ չի մտնում: Մենք պետք է ավելի շատ զինեինք Ուկրաինան մինչեւ 2014 թվականի ներխուժումը, ինչպես ես կոչ էի անում տասը տարի առաջ»:

ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

«Երեւանի ավագանու ընտրությունների երկրորդ փուլ թույլ տալ չի կարելի այս իրավիճակում, երբ որ ադրբեջանական զորքը կանգնած է Երասխի մոտ, երբ որ 100 հազար փախստական լցվել է ՀՀ, եւ յուրաքանչյուր կոպեկը կարեւոր է»,- հայտարարել է «Հանրային ձայն» կուսակցության ղեկավար Վարդան Ղուկասյանը (Դոգ)՝ արձագանքելով Հայկ Մարությանի հայտարարությանը:

«Կա այսպիսի մի վտանգ, ամենամեծ վտանգը՝ «ռոբասերժական կլանը» չպիտի իր դիրքերն ամրապնդի: Ես՝ որպես ընդդիմություն, ավելի նախընտրում եմ, որ սրանք չամրապնդվեն, քան թե Ավինյանը չվերարտադրվի»:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ՏՆՕՐԵՆԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ավարտվել է «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից պաշտոնական անփութություն, պաշտոնական կեղծիք կատարելու եւ իրեն վստահված գույքը հափշտակելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում իրականացված նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով՝ հիմնավորվել է, որ «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենը, 2014թ.-ից զբաղեցնելով հիշյալ պաշտոնը, իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ դրսեւորել է անբարեխիղճ եւ անփույթ վերաբերմունք՝ անզգուշությամբ էական վնաս պատճառելով կազմակերպության եւ պետության օրինական շահերին, ինչպես նաեւ պաշտոնական շրջանառության ենթակա փաստաթղթերում ներառելով կեղծ տեղեկություններ՝ հափշտակել է իրեն վստահված գույքը:

Մասնավորապես, հիշյալ ՊՈԱԿ-ի տնօրենը իր պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ եւ անփույթ վերաբերմունքի հետեւանքով պատշաճ հսկողություն չի իրականացրել դասախոսների եւ ուսանողների՝ սահմանված կարգին համապատասխան գործելու նկատմամբ, ինչի պայմաններում 2014-2015թթ. ուսումնական տարվա դասամատյանում՝ ՀՀ-ից դուրս գտնվող երկու ուսանողի անվան դիմաց՝ «առաջադիմությունների եւ հաճախումների ընթացիկ հաշվառում» էջերի գրառումներում, չեն գրանցվել վերջիններիս՝ մի քանի ամիսների բացակայությունները, դասամատյանում նշանակվել են կեղծ գնահատականներ, նշանակվել են ստուգարքներ եւ քննություններ:

Արդյունքում կեղծ տեղեկություններ պարունակող փաստաթղթերը հիշյալ ուսանողների ուսումը շարունակելու հիմք են հանդիսացել, որոնց հիման վրա՝ փաստացի դասընթացներին չմասնակցած եւ համապատասխան գիտելիքներ չստացած ուսանողներին հնարավորություն է տրվել փոխադրվել հաջորդ կուրս:

Բացի այդ, «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենը 2014-2019թթ. ընթացքում որպես վարորդներ աշխատանքի է ընդունել 5 անձի, որոնց ամրակցել է կազմակերպության հաշվեկշռում հաշվառված, «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենան: Այնուհետեւ հիշյալ ավտոմեքենայի երթուղային թերթերում եւ վառելիքի պահանջագրերում, նույն կազմակերպության տնտեսվարի հետ նախնական համաձայնությամբ, վերջինիս կողմից ակնհայտ կեղծ տեղեկություններ են ներառվել ավտոմեքենան շահագործելու պատրվակով 9971 լիտր բենզինի օգտագործման վերաբերյալ, եւ այդ կեղծված փաստաթղթերը հաստատվել են տնօրենի կողմից:

Արդյունքում նշված 9971 լիտր բենզինի համար ելքագրված՝ կազմակերպության տնօրենին վստահված պետական միջոցները հափշտակվել են:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 1-ին մասով, 445-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 256-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը: Որոշում է կայացվել որպես այլընտրանքային խափանման միջոց պաշտոնավարման կասեցում ընտրելու մասին:

Կազմակերպության տնտեսվարին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 256-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով: Նախաքննությունն ավարտվել է: Քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատախազին՝ հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

ՈՒԾԱԳՐԱՎ

ԿԱՍԿԱԾՎՈՒՄ Է ԱՆԵՐՋԱԳԸ

2023թ. սեպտեմբերի 30-ին՝ ժամը 21:02-ին, Քաղաքացուց հաղորդում է ստացվել այն մասին, որ Քոջ նախկին ամուսինը, գտնվելով ոչ սթափ վիճակում, դանակով փորձել է հարձակվել իր վրա, ինչից հետո ինքը խողովակով հարվածներ է հասցրել նրա մարմնի տարբեր հատվածներին, այդ թվում՝ գլխին: Նույն օրը՝ ժամը 21:57-ին, հաղորդում է ստացվել նաեւ «Արմենիա» բժշկական կենտրոնից այն մասին, որ շտաղօգնության խումբը Երեւանի Կոնդի փողոց 37 տան մոտից, «պոլիտրավմա» ախտորոշմամբ, իրենց մոտ բուժօգնության է տեղափոխել Երեւան քաղաքի բնակիչ 43-ամյա տղամարդու, որը որոշ ժամանակ անց, գիտակցության չգալով, մահացել է:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ: Իրականացված քննչական եւ վարութային անհետաձգելի գործողությունների արդյունքում պարզվել են տղամարդու՝ կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ ստանալու նախնական մի շարք հանգամանքներ:

Մասնավորապես՝ դեպքի օրը ենթադրյալ հանցագործություն կատարած անձի՝ Երեւան քաղաքի 28-ամյա բնակչի եւ տուժողի միջեւ անձնական հարցերի շուրջ վիճաբանություն է տեղի ունեցել, որի ընթացքում վերջինս, նախնական տվյալներով, գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, դանակով հարձակվել է երիտասարդի վրա:

Վերջինս, ի պատասխան, գետնից վերցրել է երկաթյա խողովակ եւ հարվածել տուժողի գլխին եւ մարմնին, ինչի հետեւանքով տղամարդը վայր է ընկել, որից հետո փորձել է ոտքի կգալ, սակայն երիտասարդը ոտքով հրել է վերջինիս, եւ նա կրկին ընկել է գետնին:

Դեպքից անմիջապես հետո երիտասարդը զանգահարել է ոստիկանություն եւ հայտնել կատարվածի մասին: 28-ամյա երիտասարդը ձերբակալվել է՝ սպանություն կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով:

Նախաքննության ընթացքում վերջինիս մասնակցությամբ կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ժամանակ նա մատնացույց է արել դեպքի վայրը, ներկայացրել վարույթի համար էական նշանակություն ունեցող մանրամասներ: Զննության ընթացքում հայտնաբերվել եւ վերցվել են հանցագործության գործիք հանդիսացող երկաթյա խողովակը, տուժողի մոտ եղած դանակը, կատարվել են նմուշառումներ:

Տուժողի մարմնական վնասվածքների բնույթը, ծանրության աստիճանը, առաջացման մեխանիզմը եւ մի շարք այլ հանգամանքներ պարզելու նպատակով նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն, հարցաքննվել են վկաներ:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ դեպքի բոլոր հանգամանքները պարզելու, ցուցմունքներում մատնանշված հանգամանքները ստուգելու ուղղությամբ: Ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը տրվել է հանձնարարություն:

ԿԱՐԵՎՈՐ

ԽՈՒՄԱՓՈՒՄ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Սամվել Բալդրյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շարքային կազմի պահեստազորային, կոչումով շարքային, պատշաճ ծանուցված լինելով տարածքային ստորաբաժանում ներկայանալու մասին, վարժական հավաքներին մասնակցելու նպատակով չի ներկայացել Տավուշի մարզի թիվ 2 տարածքային ստորաբաժանում եւ չի մեկնել վարժական հավաքի:

ՀԱՐՎԱԾ՝ ԳԼԽԻՆ

Սեպտեմբերի 30-ին՝ ժամը 21:00-ին, ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգահարած քաղաքացին հայտնել է, որ Կոնդի տներից մեկում իր նախկին փեսան դանակով հարձակվել է իր վրա, եւ ինքը պաշտպանվելով խողովակով հարվածել է նրա մարմնի տարբեր մասերին, նաեւ՝ գլխին: Հաղորդումը փոխանցվել է ոստիկանության Կենտրոնական բաժին, որտեղից օպերատիվ խումբ է մեկնել նշված հասցե: Մարմնական վնասվածքներ ստացած եւ անգիտակից վիճակում գտնվող 43-ամյա նախկին փեսային շտապօգնության խումբը տեղափոխել է «Արմենիա» բժշկական կենտրոն, իսկ ահազանգողը՝ Սիսիանի բնակիչ 28-ամյա երիտասարդը, ժամը 21:45-ին, սպանություն կատարելու հիմնավոր կասկածանքով, ձերբակալվել եւ տեղափոխվել է Կենտրոնական բաժին: Ժամը 22.45-ին հիվանդանոցից ստացվել է հաղորդում, որ 43-ամյա տղամարդը, գիտակցության չգալով, մահացել է: Նախապատրաստված փաստաթղթերը փոխանցվել են քննչական բաժին: Հանգամանքները քննությամբ պարզվում են:

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 30-ին՝ ժամը 3.20-ին, «Վաղարշապատ» բժշկական կենտրոնից ոստիկանության Վաղարշապատի բաժին ստացվել է հաղորդում, որ դանակահարված վիճակում բուժօգնության է ընդունվել Բաղրամյան գյուղի բնակիչ 34-ամյա մի երիտասարդ:

Մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ ահազանգից մոտ 20 րոպե առաջ երիտասարդը դանակահարվել է Երեւան-Էջմիածին ճանապարհին գտնվող գիշերային ակումբի տարածքում: Բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ գիշերային ակումբում կենցաղային հարցի շուրջ վիճաբանություն է ծագել տուժածի, նրա 18 ու 19 տարեկան համագյուղացիների եւ Այգեշատ գյուղի բնակիչ, 23-ամյա երիտասարդի ու նրա ընկերոջ միջեւ: Դրսում վիճաբանությունը վերաճել է ծեծկռտուքի, որի ընթացքում խաթարվել է ակումբի բնականոն աշխատանքը, կոպիտ կերպով խախտվել է հասարակական կարգը: Ծեծկռտուքի ժամանակ էլ 23-ամյա այգեշատցին իր մոտ եղած դանակով հարվածներ է հասցրել 34-ամյա բաղրամյանցուն ու դիմել փախուստի: Հետագա միջոցառումների եւ բացատրական աշխատանքի արդյունքում նույն օրը դանակահարողը կամավոր ներկայացել է ոստիկանության Վաղարշապատի բաժին եւ խոստովանել արարքը: Նա եւ նախապատրաստված փաստաթղթերն ուղարկվել են Վաղարշապատի քննչական բաժին: Հանգամանքները քննությամբ պարզվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 118 դեպք, որոնցից 9-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ՀԵՏԱՁԳՎԵԼ Է

Բերդ համայնքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման մասին լուրը անհանգստություն է առաջացրել համայնքի բնակիչների մեջ: Բերդցիները դեմ են իրենց համայնքում երկրաբանական հետազոտություններին, դրանից հետո՝ մետաղական հանքավայրի շահագործմանը: Նրանք մտավախություն ունեն, որ բաց եղանակով հանքավայրի շահագործումը խնդիրներ կստեղծի շրջակա միջավայրի համար, կաղտոտի սարերից սկիզբ առնող խմելու ջրաղբյուրները: Սեպտեմբերի 28-ին Բերդ քաղաքի մշակույթի տանը նախատեսված էր հանրային քննարկում, սակայն, Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանին ուղղված «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Սահակ Կարապետյանի դիմումի հիման վրա, այն հետաձգվել է: Դիմումի մեջ, մասնավորապես, նշված է. «Հաշվի առնելով վերջին օրերին Արցախի Հանրապետության բնակչության զանգվածային տեղահանության ֆոնին Հայաստանի Հանրապետությունում ստեղծված բարդ իրավիճակը, ինչպես նաեւ նպատակ ունենալով ապահովել «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲ ընկերության ներկայացուցիչների պատշաճ մասնակցությունը ՀՀ Տավուշի մարզի Բերդ խոշորացված համայնքի վարչական սահմաններում գտնվող Տավուշ-Խնձորուտ հանքային դաշտի տարածքում՝ որպես ընդերքի տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ծրագրի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկմանը (լսումներին)՝ խնդրում ենք հետաձգել 28.09.2023թ. ժամը 16:00-ին Բերդ համայնքի Ժիրայր Անանյանի անվան մշակույթի տանը կայանալիք հանրային բաց քննարկումը»: «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ն հայտնել է, որ հանրային քննարկման անցկացման օրվա եւ ժամի մասին նախապես կտեղեկացնի:

ԿՈՎԵՐ ԵՆ ԳՈՂԱՑԵԼ, ՄՈՐԹԵԼ

Սեպտեմբերի 29-ին անասնագողություն է կատարվել Նոյեմբերյան համայնքի Ջուջեւան գյուղում: Ջուջեւանի վարչական ղեկավար Համբարձում Պետրոսյանը հայտնեց, որ այդ օրը՝ցերեկով, միջպետական ավտոճանապարհի եզրին գտնվող արոտավայրում անհայտ անձինք մորթել են գյուղի բնակիչ Արմեն Հարությունյանի կովը, տեղում թափել կովի փորոտիքը եւ մսեղիքը գողացել: Նոյեմբերյան համայնքի Կողբ գյուղի վարչական ղեկավար Արարատ Թամրազյանից տեղեկացանք, որ սեպտեմբերի լույս 30-ի գիշերը Կողբ գյուղի ծայրամասում գտնվող «Պողոսի հող» տեղանքից գողացել են Կողբի բնակիչ Հմայակ Աբովյանի կովը: Անասնագողերը նույն ձեռագրով են գործել, անասունը մորթել, փորոտիքը թափել, մսեղիքը տարել են: Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքում նախկինում նման եղանակով անասնագողություններ չեն եղել: Դա կարող է նշանակել, որ գողերը այլ մարզերի բնակիչներ են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՐՑԱԽԻՑ

Երեկ՝ վաղ առավոտից, «Արցախբանկ»-ի մոտ հերթեր էին գոյացել. մարդիկ կտրոնը քաշել եւ սպասում էին, թե իրենց հերթը երբ կհասնի, որպեսզի հասկանան՝ ինչպես են կարողանալու ստանալ բանկում թողած իրենց հասանելիք գումարը կամ ավանդը:

Բնակիչներից մի քանիսի հետ խոսելիս հասկացանք, որ շատերը մնալու տեղ անգամ չունեն, եւ դա կապված է ոչ թե գյուղում կամ քաղաքում ապրելու նախապայմանի, այլ առաջարկված պայմանների հետ:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց հասկանալ, թե ինչ պայմաններ են առաջարկվում արցախից տեղահանված մեր հայրենակիցներին, որոնց նրանք չեն համաձայնում:

